

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Երկրաբանություն և աշխարհագրություն

1, 2014

Геология и география

Երկրաբանություն

УДК 550.34–551.24

**ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ԵՐԿՐՈԿԵՂԵՎԻ ԲԼՈԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՍԽԵՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿՐՈՎԱՆԱԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԻՐԻ**

Տ. Հ. ՇԱԽԲԵԿՅԱՆ*

*ԵՊՀ ռեզիդենտ երկրաբանության, պետրոլոգիայի և
օգտակար հանածոների հանքավայրերի ամբիոն, Հայաստան*

Աշխատանքում ձևակերպված են ՀՀ տարածքի բլոկային կառուցվածքի պարզաբանման հիմնախնդիրները: Կազմված է բլոկային կառուցվածքի նոր սխեման, տրված է բլոկների դասակարգումը: ՀՀ տարածքի բլոկային կառուցվածքի սխեմայում առանձնացված են 3 մեզարյուղ և ավելի ցածր կարգի 23 բլոկներ: Մեզարյուների միջև սահման են հանդիսանում խորքային բեկվածքները, որոնք, սովորաբար, հանդիսանում են տեկտոնական զոնաների սահմաններ: Հուսափ է նաև առաջին կարգի 5 բլոկների տարանջանումը: Երկրորդ կարգի 18 բլոկների սահմանները ծշտման կարիք ունեն:

ՈՒժեղ երկրաշարժերի ժամանակ բլոկների սահմաններով խզվածքների հիմնական տիպը կողաշարժ-վերնետքն է:

Keywords: crust's block, block structure, tectonic structure, geophysical field.

Ներածություն: Նախորդ աշխատանքում [1] ընդհանրացվել էին ՀՀ տարածքի բլոկային կառուցվածքի վերաբերյալ իրականացված տարբեր հետազոտությունների արդյունքները և տրվել էր որոշակի առաջարկներ հիմնախնդիրի լուծման համար: Մասնավորապես նշվել էր, որ ՀՀ տարածքի բլոկային կառուցվածքի սխեման կազմելու համար առնվազն պետք է լուծել հետևյալ կարևոր խնդիրները՝ ա) տալ բլոկ տերմինի ընդունելի ձևակերպումը; բ) ճշտել նրանց սահմաններ հանդիսացող բեկվածքների դիրքն ու կարգը; գ) ելնելով երկրաբանական, երկրաֆիզիկական, երկրաձևաբանական և երկրադիմանիկական տվյալներից որոշել երկրակեղևի համատարար համասեռ ֆրազմենները, որոնք տարբերվում են հարակից շրջաններից և հանդիսանում են տվյալ բլոկի տարածքը; դ) տալ բլոկների դասակարգում՝ ելնելով բլոկների սահման հանդիսացող բեկվածքների կարգից, տեկտոնական կառուցվածքում գրաված դիրքից, բլոկի չափերից, խորքային կառուցվածքից; ե) ելնելով երկրակեղևի ժամանակակից շարժումների բնուրագրերից տալ բլոկների շարժման ուղղություններն ու միջին արագությունները:

Անդրադանամք այս խնդիրներին՝ ելնելով ՀՀ տարածքի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններից, եղած փաստացի տվյալներից և երկրակեղևի բլոկային կառուցվածքի մասին եղած պատկերացումներց:

* E-mail: shtigran14@rambler.ru

Երկրակեղևի բլոկ ասելով հասկանում ենք երկրակեղևի, բեկվածքներով սահմանափակված՝ այն համեմատաբար համաստ ֆրագմենտով, որն իր կառուցվածքով, այդ թվում խորքային, տարրերվում է հարակից տարածքներից: Այսինքն բլոկի սահմաններում երկրակեղևի այդ հատվածը համարվում է քիչ թե շատ համաստ, որով նա տարրերվում է հարակից տարածքներից: Կարևոր պայման է, որ բլոկը պարտադիր կերպով սահմանափակված լինի առնվազն 20 կմ խորություն ունեցող բեկվածքներով: Ուստի անհրաժեշտ է որոշել բեկվածքների կարևոր երկրաշափական պարամետրերը՝ երկարությունը, անկնման անկյունը, բեկվածքի բեկրատման գոտու լայնությունը, դրանով հնարավոր շարժումների տիպերը և այլն: Նշված խնդիրները լուծելու համար անպայման պետք է օգտագործվեն երկրաբանական, երկրաֆիզիկական, երկրածևաբանական, տեկտոնական և այլ տվյալները, քանի որ միայն տվյալների համալիրի կիրառմամբ կրաքարանա բլոկների ու նրա սահմանների անջատման հուսալիությունն և հնարավոր կլինի առավելագույնս օգտագործել բլոկների խորքային կառուցվածքի վերաբերյալ տվյալները: Եթե առաջին հարցի դրվագը պարզ է, ապա երկրորդի հետ կապված դժվարությունները և բարդությունները շատ են, քանի որ նախ քիչ են երկրակեղևի խորքային կառուցվածքի վերաբերյալ տվյալները, ցածր է դրանց հուսալիությունը, ապա և անորոշ են դեպի խորքը բլոկի տարածման նախն պատկերացումները, հատկապես, եթե խորքը վերաբերվում է ցածր կարգի բլոկներին:

Բլոկների անջատման և ուսումնասիրման համար անհրաժեշտ փաստացի նյութերը: Պարտադիր կարգով պետք է օգտագործել ՀՀ տարածքի համար հետևյալ տվյալները.

• “Земля” և “Черепаха” սեյսմիկ կայաններով երկրաշարժների փոխանակման ալիքների մեթոդով (МОВ3) ստացված տվյալների մեկնաբանման արդյունքները, հատկապես երկրակեղևի կառուցվածքում շերտերի անջատման, դրանցով ուղղաձիգ շարժումների վերաբերյալ տվյալները: Անհրաժեշտ է օգտագործել այդ տվյալների ընդիհանրացում հանդիսացող խորքային շերտերի ռելիեֆի քարտեզները [2, 3]: Այս տվյալներին մեծ տեղ պետք է հատկացնել, քանի որ ՀՀ տարածում խորքային սեյսմիկ գոնդավորման հետազոտություններ չեն կատարվել:

• Գրավիչափական, մագնիսաչափական և երկրաշերմային դաշտերի տարածաշրջանային ու տեղային բաղադրիչների քարտեզները, տարրեր հեղինակների կողմից դրանց մեկնաբանման արդյունքները [3–8]:

• Տարբեր՝ հատկապես երկրաբանաերկրաֆիզիկական եղանակների համակրով, անջատված տարածաշրջանային բեկվածքների քարտեզները [3–13]:

• Վերջին 20–30 տարիներին կազմված դաշտային դիտարկումների հիման վրա կազմված ակտիվ տարածաշրջանային բեկվածքների քարտեզներն և բեկվածքներով տեղաշարժների մեծություններն ու արագությունները [11–13]:

• Երկրակեղևի հորիզոնական տեղաշարժների վերաբերյալ գլոբալ դիրքային համակարգով (GPS)-ի և այլ դիտարկումների տվյալները, ինչպես նաև համեմատաբար ուժեղ երկրաշարժների օջախների մեխանիզմների ու դրանց հետցնցումային գոտիների վերաբերյալ տվյալները [11–17]:

• Տեղեւյամիկ ալիքների մեթոդով տարածաշրջանային կայանների գրանցումների հիման վրա կազմված ալիքների արագությունների քարտեզները երկրակեղևի ու վերին թիկնոցի տարրեր խորություններում [18, 19]:

• Մակերեսին առավել մոտ գտնվող կառուցվածքների վերաբերյալ քազմաթիվ երկրաբանական և երկրածևաբանական փաստացի տվյալներն ու դրանց մեկնաբանման արդյունքները [5, 6, 10]:

ՀՀ տարածքի երկրակեղևի բլոկների անջատումը: Հիմնախնդրի լուծման համար օգտագործվել են ՀՀ տարածքի երկրակեղևի կառուցվածքի վերաբերյալ քազմաթիվ երկրաբանական և երկրածևաբանական փաստացի տվյալներն ու դրանց մեկնաբանման արդյունքները [3–7, 12, 13],

ՀՀ տարածքի երկրակեղևի կառուցվածքի վերաբերյալ վերը նշված, ինչպես նաև այլ բազմաթիվ տվյալներ:

Քեկվածքներն՝ որպես բլոկների սահմաններ: Հայտնի է, որ ՀՀ տարածքի, հատկապես տարածաշրջանային, բեկվածքները առանձնացնելիս տարբեր մասնագետներ օգտագործել են տարբեր ելակետային տվյալներ և մոտեցումներ, որի հետևանքով շատ անզամ կան լուրջ տարածայնություններ անջատված բեկվածքների տեղադրյան, խորության, կարգի, դիմամիկայի և այլ հարցերի շուրջ, ուստի փորձ է արվել առավել կարևոր տեղ հատկացնել առավել հոսանի ելակետային տվյալներին, այդ բվում խորքային բեկվածքների անջատման արդյունավետ մեթոդներին: Օգագործվել են հատկապես երկրաբանական փաստացի նյութի վերլուծության այն արդյունքները, որոնք հիմնավորված ու ընդունված են մասնագետների լայն շրջանների կողմից: Սովորաբար հետազոտությունները առանձնահատուկ տեղ են տալիս երկրաֆիզիկական այն դաշտերին, որոնք պարունակում են տեղեկատվություն խորքային կառուցվածքի մասին: Այս տեղ կարևոր նշանակություն ունեն երկրաշարժերի փոխանակման ալիքների եղանակով առանձնացված բեկվածքները, տարածաշրջանային երկրաֆիզիկական դաշտերը, երկրաշարժերի, հատկապես, դրանց խորությունների ու օջախի մեխանիզմի մասին տվյալներն և այլն [3–13]: Երկրաբանական տվյալներով բլոկների սահմանների անջատման համար առավել չափով օգտագործվել են տարածաշրջանային բեկվածքների անջատման կառուցվածքային, մագմատիկ և նստվածքային բնույթի փաստացի տվյալներն ու դրանց տեկտոնական մեկնաբանման արդյունքները: Երկրածնաբանական տվյալներից առավել կարևոր են դիտանացիոն ու դաշտային հետազոտությունների տվյալներն ու արդյունքները [5–7, 9–13]:

ՀՀ և հարակից տարածքներում անջատվում են չորս տեկտոնական զոնաներ և Կապանի անտիկլինորիխոմը, որպես առանձին սեզմենտ, որոնց սահմաններն են տարածաշրջանային (խորքային) բեկվածքները [5–7, 9, 10]: Համառոտակի կանգ առնենք առավել ընդունված տեկտոնական վիտեմներից մեկի վրա: Ա. Գաբրեյանը [5] հիմնվելով կարևոր պատճաերկրաբանական և կառուցվածքագոյացման նախանշանների համալիրի վրա (երկրաբանական զարգացման պատճություն, ծալքավոր կառուցվածքների տիպեր, նստվածքային և հրաբխային ապարների փորմացիաներ, խորքային բեկվածքների ծալքավորության հասակ, երկրաբանական խորքային կառուցվածք, գեոսինկինալային ճկվածքների ներդրման ժամանակ և այլն) առանձնացնում է հետևյալ տեկտոնաֆորմացիոն համալիրները (մեզարյուկները):


1. Վիրահայոց-Կապանի մեղմ ծալքավորված տեկտոնական համալիր;
2. Բազում-Զամգեզուրի ուժգին ծալքավոր գոտին;
3. Մերձարարսյան չափավոր ծալքավոր գոտին;
4. Միջինարարսյան միջլեռնային իջվածք:

Անջատված տեկտոնական միավորները հանդիսանում են երկրակեղևի բլոկային կառուցվածքի տարրերը՝ մեզարյուկներ, տարբեր կարգի բլոկներ:

Մեզարյուկների միջև սահմանների հիմնավորումը, ըստ գրավիտացիոն դաշտի գրավում է առաջնակարգ տեղ, քանի որ այն պարունակում է տեղեկատվություն ինչպես բլոկների առանձնահատկությունների, այնպես էլ դրանց սահմանների մասին:

ՀՀ տարածքի անոմալ գրավիտացիոն դաշտը բուգեի ուղղումով բնորոշվում է բացասական արժեքներով և հանդիսանում է Ալպ-Հինալայան գոտու խոչըն գրավիտացիոն մինիմումի մի մասը: Մինիմումի առանցքը ունի հյուսիարևմտյան ուղղություն (նկ. 1) և համընկնում է Հայկական լեռնաշխարհի գլխավոր բարձունքների հետ: Նշված գրավիտացիոն մինիմումը ՀՀ սահմաններում Δg -ի

մակարդակով մասնատվում է խոշոր մարգերի, որոնք բնորոշվում են գրավիտացիոն դաշտի բարձրացված և իջեցված արժեքներով՝ հարավարևմտյան, կենտրոնական, հյուսիսարևելյան և հարավարևելյան: Այսպիսով, տարածքը ընդհանուր առմամբ բնորոշվում է խճանկարային գրավիտացիոն դաշտով: Այս մարգերը ունեն հյուսիս-արևմտյան տարածում և համընկնում են Երկրաբանական հիմնական կառուցվածքների հետ: Հյուսիսարևելյան, հարավարևմտյան և հարավարևելյան մարգերը բնորոշվում են Աց-ի հարաբերական բարձրացված արժեքներով և համապատասխանում են Վիրահայոց-Ղարաբաղի և Սերծարաքայան տեկտոնական զոնաներին [9]: Կենտրոնական մարգը բնորոշվում է գրավիտացիոն մինիմումով և համապատասխանում է Բազում-Զանգեզուրի մարգին [5]: Տարածաշրջանային գրավիտացիոն դաշտի մարգերի սահմանները՝ ներկայացված են ձգված 3–5 մ/կմ արժեքներով հորիզոնական գրադիենտների գոտիներով, որոնք հիմնականում համընկնում են բեկվածքների հետ [3–8]: Եթե առաջին երեք մարգերը գուգահեռ են իրար և աղեղնաձև տարածվում են հարավ-արևելյաց դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավարևելյան մաքսիմումի մարգը սեպանման մտնում է կենտրոնական մինիմումի և հյուսիսարևելյան մաքսիմումի միջև: Նշված անոնակ մարգերի լայնությունները կազմում են 70–100 կմ, իսկ երկարությունները՝ մի քանի հարյուր կիլոմետր (ՀՀ սահմաններում 300 կմ և ավելի): Մարգերի միջև Աց-ի մակարդակների տարրերությունը կազմում է մոտ 60–80 մ/կմ: Նման բնույթի և տարածման անոնականների առաջացումը սովորաբար կապված է Կոնքադի և Մոհորովիչի սահմանների հետ, այսինքն՝ առանձնացված գրավիտացիոն դաշտերն ունեն խորքային բնույթ և արտացոլում են Հայաստանի տարածքի Երկրակեղելի խորքային անհամասնությունները:



Նկ. 1: ՀՀ տարածքի ծանրության ուժի անոնականների շրջանացման սխեմատիկ քարտեզը:

Տարածաշրջանային դաշտի տարրեր արժեքներով գոտիները՝

1. բարձր;
 2. քիչ բարձր;
 3. միջին;
 4. ցածր;
 5. դաշտի բարձր գրադիենտների տարածաշրջանային ձգված գոտիներ;
 6. դրանց առանցքները (գծիկներով տրված են ենթադրվող առանցքները):
- Տեղային բնույթի անոնականներ՝
7. մաքսիմումներ;
 8. մինիմումներ:

Մեզարլուկների միջև սահմանների հիմնավորման հարցում որոշակի դեր ունեն տարածաշրջանային մազմիսական դաշտի առանձնահատկությունները: ՀՀ տարածքում, կախված անոնակ մազմիսական դաշտի ուժգնությունից, փոփոխության բնույթից, նշանից և մորֆոլոգիայից, առանձնացնվում են երկու իրարից կտրուկ տարրերվող գոտիներ՝ Սերծարաքայան և Սերծաւանյան: Նրանց միջև սահմանը տարվում է աղեղնաձև Հոկտեմբերյան–Երևան–Վայր–Օրդուբադ գծի Երկայնքով [4]: Նոր, մանրամասն 1:50000 մասշտաբի աշխատանքական

քարտեզների օգտագործումը (հանույթի բարձրությունը 80 մ) և պրոֆիլներով **Za-ի** ուսումնասիրությունները բույլ են տախի ճշտել այդ գոտիների միջև սահմանը: Այս տվյալներով հարավ-արևելքում նշված սահմանը տարածվում է Նախիջևան-Զուլա ուղղությամբ [3]:

1. Մերձարաքսյան գոտին ներառում է Արարատյան և Նախիջևանի գոգավորությունները և բնորոշվում է հանգիստ, գրոյին մոտ արժեքներով, առանց գրադինտի անոնմալ մագնիսական դաշտով ուր գերակայում են դրական նշանի անոնմալիաները: Հարաբերականորեն ուժգին, չափերով փոքր դրական և բացասական անոնմալիաները նկատվում են գոտու հյուսիս-արևմուտքում ուր հիմնական ստրուկտորաները ծածկված է վերին օլիգոցեն-անտրոպոգենի հասակի հրաբխածին առաջացումներով:

2. Մերձսևանյան գոտին ներառում է Փոքր Կովկասի ամբողջական լեռնային կառույցը և մագնիսական դաշտի բնույթով հանդիսանում է Մերձարաքսյանի հակադրությունը: Այստեղ գերակայում են տարբեր չափերի և տարբեր նշանի ուժգին անոնմալիաներ, որոնց արժեքը հասնում է մի քանի հազար գամմ: Մերձսևանյան գոտու բարդ բնույթը, չի խանգարում բաժանել այն երեք ենթագոտիների, որոնք ավելի հստակ առանձնանում են աէրոմագնիսական քարտեզների վրա, քանի որ այստեղ բուլացված են լավային ծածկոցի և “մագնիսական ռելիէֆի” ազդեցությունները: Մագնիսական դաշտի ենթագոտիներն ունեն ընդհանուր կովկասյան տարածում և համընկնում են հիմնական տեկստոնական համալիրների ուղղությունների հետ [4]:


Որոշակի արդյունավետություն ունի մեզարյուկների անշատումը ըստ *գեռթերմալ* (*Երկրաջերմային*) դաշտի գրադինտի և շերմային հոսքի արժեքների մեծության: Հանրապետության տարածքի երկրաջերմային շրջայնացման, Ո. Միրիջանյանի կազմած՝ սխեմայով առանձնացված են 3 գոտիներ [20], որոնք գրավիտացիոն և մագնիսական դաշտերի գոտիների նման ունեն ընդհանուր կովկասյան տարածում և համընկնում են տեկստոնական հիմնական կառուցվածքների հետ: Նման համընկնումը բույլ է տախի ենթադրել, որ այդ բոլոր դաշտերի աղբյուրների միջև կա կապ, որը և հանդիսանում է բլոկային կառուցվածքը: Բացառություն է կազմում միայն երկրաջերմային գրադինտի և շերմային հոսքի միջին արժեքների գոտին, որը հիմնականում համապատասխանում է Կապանի անտիկլինորիդումին:

Որպեսզի պարզ լինի թե որ բլոկի սահմանը ինչ տվյալների հիման վրա է անջատվել, նկ. 2-ում համապատասխան բեկվածքի վրա լատիներեն տառերով նշված են այդ եղանակներն և բեկվածքի անջատման չափորոշիչները:

Կարևոր է, որ երկրակեղևի բլոկները իրենց սահմաններում լինեն համեմատաբար միատարր, այսինքն ունենան առաջին մոտեցմամբ երկրաբանական միատեսակ կառուցվածք՝ նոյն կարգի ապարներ, բյուրելյա հիմքի և շերտերի մոտավորապես միևնույն խորություն, հզրորություն և այլն, որոնցով նա էականորեն տարբերվում է հարակից բլոկներից: Քանի որ ՀՀ տարածքի խորքային կառուցվածքը հիմնականում ուսումնասիրված է երկրաշարժերի փոխանակման ալիքների, գրավիչափական և մագնիսաչափական եղանակներով, իսկ վերին մասում նաև երկրաբանական եղանակներով, ուստի հուսալի են երկրակեղևի մինչև 20–30 կմ խորություններում գտնվող խորքային կառուցվածքի տարրերը: Թերևս այդ տվյալներից առավել հուսալի են բյուրեղային հիմքի մակերևույթի տեղադրման տարրերը:

Բլոկների դասակարգությը իրականացնելիս առաջին հերթին հիմք են վերցվել Անատոլիա-Կովկաս-Իրան տարածաշրջանի սալերի տեկստոնիկայի ընդունված սխեմաները և ուշադրություն է դարձվել երկու առավել կարևոր պարամետրերի վրա՝ բեկվածքների կարգի և ՀՀ տարածքի տեկստոնական շրջայնացման հայտնի

սխեմաներում բլոկների գրաված դիրքի վրա: Քանի որ հանրապետության տարածքը գտնվում է կոլիզիայի գոտում, ապա ՀՀ տարածքում առավել բարձր կարգի բլոկային կառուցվածքի միավորը կարող է լինել մեզարլոկը, այսինքն բացառվում են սալերի, ենթասալերի, սեզմենտների առկայությունը: Մեզարլոկները կարող են կազմված լինել տարբեր կարգի բլոկներից, քանի որ սալերի բախման գոտիները սովորաբար խիստ բեկորատված են և ՀՀ տարածքի անջատված բեկվածքների բանակը մեծ է, իսկ կարգը՝ տարբեր [3, 4, 6, 7, 13]: Սրանով են բացատրվում նաև ՀՀ տարածքի երկրակեղևի բլոկային կառուցվածքի շատ տարբեր՝ բլոկների տարբեր կարգ ու մեծ քանակ, բլոկների խորքային բարդ կառուցվածքը, հորիզոնական և ուղղաձիգ տեղաշարժերը, բլոկները կազմող ապարների յուրահատուկ կոշտությունը մինչև 20–30 կմ խորությունները, որը համապատասխանում է սեյսմագեն շերտի հզորությանը, երկրաշարժերի դիմերենցածված պարամետրեր՝ ուժ, խորություն, օջախի մեխանիզմ և այլն:



Նկ. 2: ՀՀ տարածքի երկրակեղևի մեզարլոկների, I և II կարգի բլոկների սխեման ըստ երկրաբանակարգական տվյալների համալիրի.

- 1–3. մեզարլոկներ;
4. մեզարլոկների սահմաններ;
5. մեզարլոկների համարակարում;
- I կարգի բլոկների՝
6. սահմաններ
7. համարակարում;

- II կարգի բլոկների՝
8. սահմաններ;
9. համարակարում:

Նկարի վրա գծիներով տարված են մեզարլոկների և բլոկների ենթադրյալ սահմանները:

Մեզարլոկների սահմանների անջատման մեթոդներն և չափամիջները.

G՝ գրավչափական տվյալներ

(ց՝ խոշոր գրադիենտների գծային գոտիները, մ՝ դաշտի մակարդակի արժեքների փոփոխությունները, ձ՝ ների, ձևերի, չափերի, ուժգնության փոփոխությունները);

M՝ մազմաշափական տվյալներ

(Դ՝ խոշոր գրադիենտների գծային գոտիները, Տ՝ անոմալիաների նշանների փոփոխություններ, յ՝ ձգված անոմալիաների ուղղությունների, ձների, չափերի, ուժգնության փոփոխություններ);

P՝ երկրաշերսային տվյալներ

(Ի՝ ջերմայն հոսքի և երկրաշերմային գրադիենտի արժեքների փոփոխություններ, Կ՝ երկրաշերմային գրադիենտի և ջերմայն հոսքի լոկալ անոմալիաների առկայություն);

S՝ սեյսմարամասկան տվյալներ

(Ե՝ ուժեղ երկրաշարժների էալիկենտրոնների գծային դասավորություն, Օ՝ օջախի մեխանիզմի հավանական բեկվածքներ, Վ՝ սեյսմիկ ալիքների արագությունների կտրուկ փոփոխություններ երկրակեղևում և վերին թիկնոցում);

E՝ երկրաբանական տվյալներ

(Ր՝ երկրի մակերեսին առկա բեկվածքներ, Հ՝ հրաբխային կրների գծային դասավորություն, Բ՝ ֆորմացիաների կտրուկ փոփոխություններ, Ծ՝ երկրածնաբանական տարբերի կտրուկ փոփոխություններ);


D՝ խորքային կառուցվածքի տվյալներ

(Ց՝ բյուրենյա հիճքի խորության կտրուկ փոփոխություններ, Ա՝ երկրակեղևի խորքային սահմանների աստիճանած փոփոխություններ, Ճ՝ երկրակեղևի տարբեր շերտերի հզորության փոփոխություններ):

Անջատված 3 մեզարլոկները համապատասխանում են ՀՀ տարածքի տեկողական գոնաներին, այսինքն՝ գրավիտացիոն, կամ մագնիսական դաշտերի ուղղության գոտիներին (նկ. 2): Ավելի ցածր կարգի բլոկների դասակարգման համար առավելությունը տալով երկրակեղեղի խորքային կառուցվածքը արտահայտող տվյալներին, մասնավորապես սեյսմիկ, գրավիչափական տվյալներին և բեկվածքներին ու դրանցով սահմանափակված տարածքներին, կարելի է պնդել, որ առաջին կարգի բլոկները պետք է համապատասխանեն տեկողական ենթագոնաներին կամ երկրաբանական խոշոր տարրերին (անտիկլինորիում կամ սինկլինորիում, սեյսմիստ և այլն): Նկ. 2-ում անջատված են 5 առաջին կարգի բլոկներ՝ երեքը երկրորդ մեզարլոկում, իսկ երկուսը երրորդ: Առաջին մեզարլոկում թե՛ երկրաբանական, և թե՛ երկրաֆիզիկական տվյալներով առաջին կարգի բլոկներ անջատելու համար ակնհայտ հիմքեր չկան, սակայն սա չի նշանակում, որ այդ կարգի բլոկներ այս մեզարլոկում ընդհանրապես չկան:

Անջատվել են նաև երկրորդ կարգի բլոկներ բոլոր մեզարլոկներում: Դրանց քանակը 18 է: Այդ տվյալներով առավել բեկորատված է առաջին մեզարլոկը քան երրորդը:

Բլոկային կառուցվածքի արտացոլումը երկրակեղեղի ստորին հորիզոններում: ՀՀ տարածքի ԵՓԱՄ-ի տվյալներով կառուցված Սնինովիչիչի մակերեսի



Նկ. 3: ՀՀ տարածքի երկրակեղեղի բլոկային կառուցվածքի պարզեցված քարտեզը նկ. Ա լրացված երկրադիմանմիկայի որոշ տվյալներով:

1. GPS-ի արագությունների վեկտորները, որոնց երկառությունը համապատասխանում է արագությանը [16]:
2. $M \geq 4$ երկրաշարժերի օշախների սեղմման լարումների ուղղությունները, որոնց բաշխման վարդութագրամը պատկերված է նկ. Բ-ում [18]:

Բլոկների հորիզոններական տեղաշարժերը: Այս նպատակի համար օգտագործվել են ՀՀ տարածքում իրականացված GPS դիտարկումների արդյունքները և տարրեր ժամանակներում, տարրեր մասնագետների կողմից որոշված $M \geq 4$ երկրաշարժերի օշախներում սեղմման լարումների ուղղությունները (նկ. 3): GPS-ի տվյալներով ՀՀ տարածքի բոլոր դիտարկման կետերը, որոնք տեղադրված են

[2] և բլոկային կառուցվածքի քարտեզների համապատանից երեսում է, որ կա որոշակի համընկնում մեզարլոկների, առաջին կարգի բլոկների սահմանների (որոնք որոշ չափով համընկնում են Սնինովիչիչի մակերեսի ձգված հորիզոններական գրադարձությունում գոտիների հետ) և ուղիղ տարրերի միջև: ՀՀ տարածքի երկրակեղեղի ավելի խորը հորիզոններում բլոկային կառուցվածքի հետ կապված համեմատաբար հուսալի են համարվում նաև սեյսմիկ ալիքների արագությունների վերաբերյալ տվյալները որոնք մանրանասն չեն և ընդգրկում են երկրակեղեղի ստորին [19] ու վերին թիկնոցի [18] խորությունները: Նկատվում է մեզարլոկների և առաջին կարգի բլոկների որոշակի համընկնում **P**-ալիքների անոմալիաների հետ:

տարբեր մեզարլոկների և բլոկների վրա, առավելապես, տեղաշարժվում են դեպի հյուսիս-հյուսիսարևելք: Հորիզոնական տեղաշարժերի արագությունները տարեկան կազմում են 10–20 մմ, ընդ որում հարավում՝ Արարական սալին մոտ գտնվող կետերում, արագությունը փոքր-ինչ գերազանցում է ծայր հյուսիսում գտնվող կետերի շարժման արագությանը: Կովկասի մասշտարով այս օրինաչափությունը առավել նկատելի է: Մոտ 10 տարվա դիտարկումներով GPS-ի կետերի տեղաշարժման ուղղության և արագության մեծությունները բավականին կայուն են [12–14]:

$M \geq 4$ երկրաշարժերի օջախների մեխանիզմի պարամետրերը ՀՀ տարածքի համար նույնական բավականին կայուն են: Եթե վերցնենք միայն այդ երկրաշարժերի ժամանակ սեղմնան առանցքների ուղղությունները, ապա դրանք ևս ունեն հյուսիս-հարավին մոտ միջին ուղղություն (նկ. 3, A): Ծիշտ է, որոշ դեպքերում օջախի սեղմնան վեկտորները շեղվում են այս օրինաչափությունից, սակայն այդ շեղումները էական չեն, որը ակնհայտ է սեղմնան առանցքների վարդպիտացմանց (նկ. 3, B): Այս տվյալներով խոսել բլոկների պտույտի, բարձրացման կամ խորասուզման նախն հնարավոր չ: Միջին ուժի երկրաշարժերի ժամանակ առաջացած խզումներն ունեն ուղղաձիգին մոտ անկում, իսկ սեղմնան և ընդարձակման վեկտորները $50\text{--}70^\circ$ անկում [16]: Սա հիմք է տալիս եզրակացնելու, որ ուժեղ երկրաշարժերի ժամանակ բլոկները կարող են տեղաշարժվել ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական ուղղություններով: Այսինքն, ուժեղ երկրաշարժերի ժամանակ առաջացած խզվածքների հիմնական տիպը կողաշարժ-վերնետքն է, որի մասին են վկայում երկրաբանական տվյալները, և հատկապես միջին ուժի և ուժեղ օջախների մեխանիզմների պարամետրերը [11, 15–17]: Առավել բարդ է բեկվածքի բեկորատման գոտու լայնության որոշման խնդիրը: Այս հարցում առավել հուսալի են ուժեղ երկրաշարժերի հետցնցումնային գոտու լայնության տվյալները, որոնք անհիշականորեն ցույց են տալիս բեկորատման գոտու լայնքը [3, 11, 15, 17]: Ըստ այդ տվյալների բեկորատման գոտու առավելագույն լայնքը $M=7,0$ մագնիտուդի երկրաշարժի դեպքում կազմում է 5–8 կմ:

Եզրակացություններ:

1. Առաջարկվում է ՀՀ տարածքի երկրակեղին բլոկային կառուցվածքի նոր սխեմա, որի վրա առանձնացված են նեզարլոկներ և առաջին ու երկրորդ կարգի բլոկներ՝ ելեկով երկրաբանաերկրաֆիզիկական տվյալների համալիրից: Փոք է արգել տալ բլոկների տեղաշարժերի ընդհանուր սխեման, անել եզրակացություններ դրանց դիմամիկայի մասին: Հաստատվում է տարբեր հեղինակների կողմից արված այն եզարակացությունը, որ ՀՀ տարածքի երկրակեղերը խիստ բեկորատված է: Մեզարլոկների լայնությունը կազմում է առնվազն 80 կմ և նրանք ունեն ծգվածություն ընդհանուր կովկասյան ուղղությամբ, իսկ I ու II կարգի բլոկներն ունեն ծգվածության սահմանափակում, դրանք ավելի շատ իզոմետրիկ են:

2. Մեզարլոկների միջև սահմանները՝ տարածաշրջանային բեկվածքները, հիմնականում աճչատվում են համարյա բոլոր երկրաբանաերկրաֆիզիկական տվյալներով և բավականին հուսալի են: Որոշ վերապահումներով հուսալի են նաև աճչատված առաջին կարգի բլոկների սահմանները: Շշտման կարիք ունեն երկրորդ կարգի բլոկների զգալի մասի սահմանները նոր ելակետային տվյալներով, չնայած սրանք ևս առանձնացվել են մոտավորապես նույն մոտեցումով և տվյալների համալիրով:

3. ՀՀ տարածքի բլոկների գերակշռող հորիզոնական շարժման ուղղությունը դեպի հյուսիս-հյուսիսարևելք է, իսկ $M=4,5$ երկրաշարժերի օջախների սեղմնան լարումներն ունեն հյուսիս-հարավ գերակշռող ծգվածություն: Միջին ուժի երկրաշարժերի ժամանակ առաջացած խզումներն ունեն ուղղաձիգին մոտ անկում, իսկ սեղմնան և ընդարձակման վեկտորները $50\text{--}70^\circ$ անկում: Ուժեղ

Երկրաշարժերի ժամանակ բլոկները կարող են տեղաշարժվել ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական ուղղություններով և առաջացած կամ ակտիվացած խզվածքների հիմնական տիպը կողաշարժ-վերնետքն է: Առանձին բլոկների պտույտներ, խորասուզում կամ այլ տեղաշարժեր եղած փաստացի տվյալներով չեն նկատվում:

4. ՀՀ տարածքի բլոկային կառուցվածքը արտացոլող տվյալների աղյուրներն ունեն մակերեսին մոտ, կամ մինչև 20–30 կմ խորություն, հետևաբար վերը նշված օրինաչափությունները, կարելի է վերագրել միայն այդ խորություններին, կամ ինչպես ընդունված է սեյսմաբանության մեջ՝ սեյսմոգեն շերտին:

5. ՀՀ տարածքի երկրակեղևի խիստ բեկորատվածությունը բլոկների, եղած տեղաշարժերի ու լարվածությունների վերաբերյալ տվյալները հիմք է տալիս ենթադրելու, որ ճիշտ են այն մասնագետները, որոնք բացառում են ՀՀ տարածքում մազնիտուլը 7,5-ից ավելի երկրաշարժերի առաջացումը [3, 11–13], քանի որ այսպիսի երկրաբանական պայմաններում հնարավոր չէ դրան համապատասխան տեկտոնական լարումների կուտակում:

Ստացվել է՝ 10.12.2013

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Չախրելյան Տ.Հ.** ՀՀ տարածքի բլոկային կառուցվածքի մասին: // ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, 2013, № 3, էջ. 9–14.
2. **Բադալյան Մ.С., Կիրակոսյան Ա.Ա., Օսիպովա Ի.Բ.** Границы раздела в земной коре Армении по сейсмическим данным. // Изв. АН Арм. ССР. Науки о Земле, 1986, № 1, с. 42–52.
3. **Назаретян Շ.Ն.** Глубинные разломы территории Армянской ССР (по геофизическим данным). Еր.: Изд-во АН Арм. ССР, 1984, 134 с.
4. **Акопян Ռ.Ռ.** Геологическое истолкование аномального магнитного поля. Геология Армянской ССР. Т. X: Геофизика. Еր.: Изд-во АН Арм. ССР, 1972.
5. **Габриелян Ա.Ա., Սարկисյան Օ.Ա., Սիմոնյան Գ.Պ.** Сейсмотектоника Армянской ССР. Еր.: Изд-во Ереванского университета, 1981, 284 с.
6. **Меликсян Բ.Մ., Արխիպով Բ.Կ., Կառլով Գ.Պ., Մեշերյակովա Վ.Բ.** Особенности тектономагматического развития и закономерности размещения магматизма и оруденения в южной части Малого Кавказа (сообщения 1 и 2). // Изв. АН Арм. ССР. Науки о Земле, 1975, № 6, с. 52–66.
7. **Սարկիսյան Օ.Ա., Վոլчанская Հ.Կ.** О блоковом строении территории Армянской ССР и прилегающих районов Малого Кавказа. // Изв. АН Арм. ССР. Науки о Земле, 1973, № 4, с. 6–17.
8. **Balassanian S., Nazaretian S. et. al.** The New Seismic Zonation Map for the Territory Armenia. // Natural Hazards, 1997, v. 15, № 2–3, p. 231–249.
9. **Ասլանյան Ա.Տ.** Региональная геология Армении. Ер.: Айпетрат, 1959, 340 с.
10. **Սարկիսյան Օ.Ա.** Палеотектонические карты Арм. ССР и прилегающих частей Малого Кавказа для Альпийского этапа развития. // Изв. АН Арм. ССР. Науки о Земле, 1971, № 3, с. 3–22.
11. **Կազարյան Ա.Է.** Анализ сейсмического состояния территории Армении как одного из факторов оценки текущей сейсмической опасности. // Изв. АН Арм. ССР. Науки о Земле, 2011, № 2, с. 29–42.
12. **Davtyan V., Doerflinger E., Karakhanyan A. et al.** [Fault Slip Rates in Armenia by the GPS Data](#). // Proceedings of NAN RA, Earth Sciences, 2006, v. 59, № 2, p. 3–18.
13. **Karakhanyan A., Vernant P., Doerflinger E. et. al.** [GPS Constraints on Ccontinental Deformation in the Armenian Region and Lesser Caucasus](#). // Tectonophysics, 2013, v. 592, p. 39–45.
14. **Robert Reilinger et al.** GPS Constraints on Continental Deformation in the Africa-Arabia-Eurasia Continental Collision Zone and Implications for the Dynamics of Plate Interactions. // Journal of Geophysical Research, 2006, v. 111, p. b05411, DOI:10.1029/2005jb004051.
15. **Dorbath L., Dorbath C., Rivera L., Fuenzalida A., Cisternas A., Tatevossian R., Aptekman J., Arefiev S.** Geometry, Segmentation and Stress Regime of the Spitak (Armenia) Earthquake from the Analysis of the Aftershock Sequence. // Geophys. J. Int., 1992, v. 108, p. 309–328.

16. Назаретян С.Н., Киракосян А.А., Гаспарян В.С., Микаелян Э.М. Направления региональных напряжений в верхних частях земной коры территории Армении и вероятные активные глубинные разломы. В сб.: Геодинамика Кавказа. М.: Наука, 1989, с. 165–170.
17. Арефьев С.С. Эпицентральные сейсмологические исследования. ИКЦ Академкнига, 2003, 375 с.
18. Закарян К.А. Об особенностях строения верхней мантии Кавказа по данным сейсмологических исследований. М.: ИФЗ АН СССР, Препринт № 12, 1983, 14 с.
19. Мкртчян М.Б. Скорости продольных волн в нижних частях земной коры Малого Кавказа по данным наблюдений сейсмических станций. // Изв. АН Арм. ССР. Науки о Земле, 1984, № 3, с. 57–66.
20. Мириджян Р.Т. Геотермическое районирование территории Армянской ССР. // Изв. АН Арм. ССР. Науки о Земле, 1965, № 3–4, с. 67–74.

Т. А. ШАХБЕКЯН

СХЕМА БЛОКОВОГО СТРОЕНИЯ ЗЕМНОЙ КОРЫ ТЕРРИТОРИИ РА ПО КОМПЛЕКСУ ГЕОЛОГО-ГЕОФИЗИЧЕСКИХ ДАННЫХ

Резюме

В работе сформулированы основные задачи блокового строения земной коры территории Армении. Составлена новая схема блокового строения, дана классификация блоков. На схеме блокового строения Армении выделены три мегаблока и 23 блока более низкого порядка. Границами между мегаблоками, выделенными разными методами, служат глубинные разломы, которые традиционно считаются границами между тектоническими зонами. Достаточно надежно выделяется также большая часть блоков первого порядка. Границы блоков второго порядка нуждаются в уточнении.

Основной тип подвижек по границам блоков при сильных землетрясениях взбросо-сдвиговый.

Т. Н. SHAKHBEKYAN

BLOCK STRUCTURE SCHEME OF THE EARTH'S CRUST OF THE TERRITORY OF ARMENIA ACCORDING TO THE COMPLEX GEOLOGICAL GEOPHYSICAL DATA

Summary

In this paper were formulated the main unsolved problems of block structure of the territory of Armenia. The new scheme for block structure was built and the classification of those blocks was done. On the scheme of block structure of Armenia three mega blocks and 23 blocks of different classes are separated. As the boundaries of the mega blocks were accepted the deep faults that traditionally are considered as the boundaries among the tectonic zones. The great part of the blocks of first class, with some admissions, are separated more reliable. The boundaries of second classes must be corrected.

The main type of movements by the boundaries of blocks during the strong earthquakes is strike-slip.